ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/16

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) կողմից 04.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ն 04.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար կազմակերպվել է ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում սեղմված բնական գազը:

Ընթացակարգի հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 18.01.2019թ. ժամը՝ 15:55-ը:

Հակադարձ աճուրդի ժամկետ է սահմավել 21.01.2019թ. ժամը՝ 15:55-ը:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ա/Ձ) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ թիվ 02 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող, իսկ 29.01.2019թ. թիվ արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ա/Ձ-ի մասնակցությունը 21.01.2019թ. ժամը՝ 15:55-ին կայացած աճուրդին սահմանափակվել է ժամկետի խախտման պատճառով:

Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 29.01.2019թ.:

Ընթացակարգի հակադարձ աճուրդին Ա/Ձ-ի մասնակցությունը սահմանափակվել է, քանի որ խախտվել է ՀՀ կառավարության 2017թ մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ էլէեկտրոնային աճուրդի իրականացման կարգ) 13-րդ կետով սահմանված դրույթները, համաձայն որի աճուրդն սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին, այսինքն հակադարձ աճուրդը պետք է սկսվեր 22.01.2019թ. ժամը՝ 15:55-ին, այլ ոչ թե 21.01.2019թ. ժամը՝ 15:55-ին:

Ա/Ձ-ն չնկատելով, որ համակարգում որպես հակադարձ աճուրդի օր նշված է եղել 21.01.2019թ. ինչպես միշտ պատրաստվել է աճուրդին մասնակցել հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը, այսինքն 22.01.2019թ. (հիմք է ընդունվել նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տարածած հաղորդագրությունը այն մասին, որ ծրագրի խափանման պատճառով որոշ գնման ընթացակարգերի հայտերի ներկայացման վերջնաժամկետներ երկարաձգվել են մինչև 18.01.2019թ. և դրանց շրջանակներում աճուրդները կսկսվեն 22.01.2019թ.), այնինչ այդ օրը մուտք գործելով համակարգ պարզվել է, որ աճուրդն արդեն կայացել է 21.01.2019թ.:

Ա/Ձ-ն գտնում է, որ Ընթացակարգը կազմկակերպվել է խախտումներով, ինչի արդյունքում սահմանափակվել է նրա մասնակցությունը հակադարձ աճուրդին:»:

Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 29.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումը:

4. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Հայկ Ղազարյանը:

2. <u>ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 05.02.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՀԿՀ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) կողմից 04.02.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը.

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար՝ սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանված է՝

- հրապարակման ժամանակ՝ 11.01.2019թ. ժամը 15:52:37,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ 18.01.2019թ. ժամը 15:55:00,
- հակադարձ աճուրդ 21.01.2019թ. ժամը 15:55:00:

Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ն 04.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ չնկատելով այն, որ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի, որպես հակադարձ աճուրդի օր է սահմանված եղել 21.01.2019թ. պատրաստվել է աճուրդին մասնակցել հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը, այսինքն՝ 22.01.2019թ., այնինչ նույն օրը մուտք գործելով համակարգ պարզել է, որ Աճուրդը կայացել է՝ 21.01.2019թ. և վերջինիս մասնակցությունը հակադարձ աճուրդին սահմանափակվել է ժամկետի խախտման պատճառով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդն սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ընդունման վերջնաժամկետը սահմանված է եղել 18.01.2019թ.:
- ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 21.01.2019թ.:
- Համաձայն ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 13-րդ կետի՝ աճուրդն սկսվում է հայտերը

ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը, հետևաբար հակադարձ աճուրդը պետք է տեղի ունենար 22.01.2019թ.:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդի ժամկետը 21.01.2019թ. սահմանելով՝ խախտել է ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 13-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ռուստամ Արտաշեսի Սարգսյան Ա/Ձ-ի կողմից 04.02.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:
2. Պարտավորեցնել ՀԿՀ-ն ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 21.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության համապատասխան որոշմամբ «ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- 29.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրության համապատասխան որոշմամբ «ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ